ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 01 ք.Արտաշատ

„15„ 01 2019թ.

<<ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի<դ> ենթակետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Պարույր Սևակի տուն թանգարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությանկանոնադրության տեքստում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/Կանոնադրության 1-ին կետի 1-ին պարբերության <<մշակութային>> բառից հետո լրացնել <<գիտական, կրթական>> բառերը:

2/Կանոնադրության 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«8. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ լրիվ՝ «Պարույր Սևակի տուն-թանգարան»

պետական ոչ առևտրային կազմակերպություն

ռուսերեն՝ լրիվ՝ «Дом-музей Паруйра Севака» государственная некоммерческая организация

կրճատ՝ «Дом-музей Паруйра Севака» ГНО

անգլերեն՝ լրիվ՝ «The Paruyr Sevak House-Museum» Non Commercial State Organization

կրճատ՝ «Paruyr Sevak House-Museum» NCSO»:

3/ Կանոնադրության 10-րդ կետի «գրող,» բառից հետո լրացնել «գիտնական» բառը:

4/ Կանոնադրության 12-րդ կետը լրացնել նոր՝ «գ»ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

« գ. արտադրական գործունեության իրականացում, ծառայությունների մատուցում և արտադրանքի (ապրանքների) իրացում, հանրային սննդի կազմակերպում՝ այնքանով, որքանով այդ գործունեությունը ծառայում ու համապատասխանում է կազմակերպության ստեղծման նպատակին և դրա իրականացմանը:»

2. Հանձնարարել թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ համապատասխան ռեգիստրում իրականացնել կատարված փոփոխության պետական գրանցումը:

15.01.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ.ՍԱՐԳՍՅԱՆ